

ՀԱՂԱՌՐԳԻՈՒՄՆԵՐ

ԷԴՈՒԱՐԴ ԴՈՂՈՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՏԵԲԱՆՔՆԵՐԸ ՆԱՅԱՍԱՆՈՒՄ (1990-2001 ԹԹ.)

Անկախացմանը հաջորդած առաջին տարիների փոփոխական համընդհանուր անկման պայմաններում, երբ 1993 թ. հանրապետության համախառն ներքին արդյունքը (ՆՆԱ) 1989 թ. համեմատությամբ նվազել էր շուրջ 56%-ով, Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը 57%-ով, իսկ արդյունաբերական արտադրանքինը 60%-ով¹, գյուղատնտեսության ոլորտում զգալիորեն կրճատվել էին մշակովի հողատարածքները, շեշտակի անկում էր ապրել անասնապահաբանակը և այլն², աննախադեպ խոշորամասշտաբ անկում գրանցվեց նաև հանրապետության սոցիալական ոլորտում: Անկախացումից հետո հանրապետությունում առաջին անգամ արձանանգրվեցին այնպիսի երևույթներ, ինչպիսիք են գործազրկությունն ու աղքատությունը:

Հանրապետությունում աննախընթաց փոփոխություններ ապրեց ավելանում էր գործազուրկների թվաքանակը, այսպես, եթե 1992 թ. հանրապետության զբաղվածության ծառայությունում գրանցված էր մոտ 56 հազար 400 գործազուրկ³, ապա 1994-ին նրանց թիվը ավելացել էր մոտ 63%-ով և հասել շուրջ 92 հազարի⁴: Շարունակելով ներկայացնել Հայաստանում գործազուրկների թվի աճի դինամիկան՝ նշենք, որ փակվել է 1996 թ. ապրիլին գործազուրկների թիվը կազմում էր ավելի քան 143 հազար մարդ⁵, իսկ արդեն փաթեթավորված էր 160 հազար 300-ի⁶: Գործազրկության թվի աճը շարունակվում էր նաև հետագա տարիներին: Այսպես, հանրապետության փոփոխության մակրոտնտեսական կայունացմամբ հայտնի 1997 թ. Հայաստանի

1 «Հայաստան: Մարդկային զարգացման զեկույց. 1995», Երևան, 1995, էջ 16-17:

2 «Հայաստանը թվերով. 1992», վիճակագրական համառոտ ժողովածու, Երևան, 1994, էջ 95.
«Հայաստանի Հանրապետություն», 31 դեկտեմբերի, 1994, 9 մարտի, 1995:

3 «Հայաստանը թվերով. 1992», վիճակագրական համառոտ ժողովածու, Երևան, 1994, էջ 40:

4 «Հայաստան: Մարդկային զարգացման զեկույց. 1995», Երևան, 1995, էջ 23:

5 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1996 թ. հունվար-ապրիլին», Երևան, 1996, էջ 34:

6 «Հայաստանի Հանրապետություն», 18 մարտի 1997:

Հանրապետությունում միայն պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել էր ավելի քան 14 հազարով և կազմում էր 174 հազար 400 մարդ⁷: Ճիշտ է, 1998 թ. գործազրկությունը հանրապետությունում հաջողվեց որոշ չափով կրճատել, այն հասցնելով մոտ 140 հազարի⁸, որ գերազանցապես պայմանավորված էր զուրկ փոխադրված բնույթի հանգամանքներով և բացառվում էր 1991 թ. դեկտեմբերի 27-ին ընդունված «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքում⁹ և մի շարք այլ հարակից նորմատիվային փաթեթներում քննարկվող ժամանակահատվածում կատարված փոփոխությունների հետևանքով գործազրկություն սոցիալ-խրավական հասկացության չափորոշիչների նեղացմամբ: Գործազրկություն հասկացության շրջանակներն ավելի նեղացան հարկապես 1996 թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ ԱԺ ընդունած և 1997 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Զբաղվածության մասին»¹⁰ նոր օրենքով, ըստ որի Հայաստանում գործազուրկի կարգավիճակից կարող էին օգտվել միայն անձինք, որոնք ունեին առնվազն 1 տարվա աշխատանքային ստաժ¹¹ և այլն: Սակայն հաջորդ տարիներին գործազրկությունը հանրապետությունում ցուցաբերում էր համեմատական աճի միտումներ: Այսպես, 1999 թ. սեպտեմբերին գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմում էր 11,3%, որը 2,6 տոկոսային կետով ավել էր նախորդ տարվա հունիս ամսվա համեմատ¹², իսկ ամբողջ տարվա կտրվածքով գործազուրկների թիվը հասել էր 174 հազար մարդու¹³: Գործազրկության դեմ պայքարի հիմնական եղանակը նոր աշխատատեղերի բացումն էր: Հասկանալի է, որ այդ հեռանկարը հիմնականում պետք է կապվեր փոփոխության մասնավոր սեկտորի հետ: Մինչդեռ մասնավորեցված նախկին պետական ձեռնարկությունների ավելի քան 80%-ը մեր հերազմության խնդրո առարկա ժամանակահատվածում կատարյալ անգործության էր մատնված¹⁴, իսկ նոր ձեռնարկությունների բացման ընթացքը մի շարք հանգամանքների բերումով չափազանց դանդաղ էր ընթանում: Նման պայմաններում, ընդհակառակը, գործազրկության թիվը ոչ միայն չէր նվազում, այլ նույնիսկ զգալիորեն ավելանում էր: Այսպես, 1997-ից մինչև 2001 թ. Հայաստանում փակվել էր 163 հազար աշխատատեղ: Այս հարցում որոշ առաջընթաց արձանագրվեց բուն 2001-ին: Տարեսկզբից մինչև հոկտեմբեր հանրապետությունում բացվել էին շուրջ 38 հազար նոր աշխատատեղեր¹⁵: Տակավին 2001 թ. դեկտեմբերի

7 Անդ, 7 մայիսի 1998:

8 «Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 2001 (1997, 1998)», Երևան, 2001, էջ 41:

9 «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի փոփոխություն», հ. 24 (1004), Երևան, 31 դեկտեմբերի 1991, էջ 13-24:

10 «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.)», գիրք Ա., Երևան, 1999, էջ 478-488:

11 Անդ, էջ 475:

12 «Հայաստանի Հանրապետություն», 29 դեկտեմբերի 1999:

13 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-նոյեմբերին» (տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույց), Երևան, 2000, էջ 40:

14 Տե՛ս **Գ. Կիրակոսյան**, Անցումային փոփոխության վերափոխումները: Տնտեսության հարցեր, Երևան, 2002, էջ 12:

15 «Հայաստանի Հանրապետություն», 15 դեկտեմբերի 2001:

դրությամբ հանրապետությունում փարածքային կենտրոններ դիմած աշխատանք փնտրող անձանց թվաքանակը կազմել է շուրջ 164 հազար 3 հարյուր մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ էին ստացել շուրջ 140 հազարը¹⁶: Գործազրկության թվի պահպանումն ու աճը հատկապես մտահոգիչ էր հանրապետության բնակչության ընդհանուր թվի նվազման ֆոնի վրա: Ըստ պաշտոնական տվյալների 1992-1998 թթ. հանրապետությունից հեռացել էր ավելի քան 600 հազար մարդ¹⁷: Ըստ որոշ տվյալների՝ այդ նույն ժամանակահատվածում հանրապետությունից մշտապես հեռացել էր ավելի քան 720 հազար մարդ¹⁸: Արտագաղթը չթուլացող փնտրվող շարունակվում էր նաև հաջորդ տարիներին: Այսպես, 1999 թ. հայրենի եզերքը լքել էին 75-80 հազար, իսկ 2000 թվականին՝ մոտ 53 հազար մարդ: Այդպիսով, 1991-2000 թթ. հանրապետությունից ընդհանուր առմամբ արտագաղթել էր մոտ 900 հազար մարդ, որոնց 3/4-ը գտնվում էր նախկին ԽՍՀՄ փարածքի երկրներում, որոնց 80-85%-ը Ռուսաստանի Դաշնությունում, իսկ մնացյալ 1/4-ն էլ ԱՄՆ-ում ու Եվրոպայի տարբեր երկրներում¹⁹: Անկախացումից հետո Հայաստանի սոցիալական կացության բնորոշ գծերից էր մեծ չափերի հասնող աղքատությունը: Դրա հիմնական պարճառներից էին փոփոխության համարաբար փուլգտնումն ու հանրապետությունում սկսված ընկերաքաղաքական արմատական վերափոխումները: 1990-ականների արդյունաբերական և հարկապես էներգետիկ ճգնաժամի շրջանում Հայաստանում հարկադիր պարապտուղի դարապարտվեց շուրջ 500 հազար մարդ²⁰: Հանրապետության համայնավարական փոփոխության սեփականաշնորհումը Հայաստանում ձեռավորեց այսպես կոչված կառուցվածքային աղքատություն, երբ ազգաբնակչության 3-4%-ը փրկեց երկրի հարստության գերակշռող մասին և բնակչության մոտ 80-85%-ը հայտնվեց աղքատության ճիւղաններում²¹: Դրան մեծապես նպաստեց նաև 1993-ին իրականացված դրամափոխությունը: Շրջանառության մեջ մտնող դրամով ռուբլու փոխանակային չափը սահմանվել էր մինչև 50 հազար ռուբլի, որի դիմաց մեկ անձին տրվում էր 250 դրամ²², որն այդ շրջանի փոխանակման պետական կուրսով²³ հավասարվում էր մոտ 17 ԱՄՆ դոլարի: Փաստորեն մասնավորեցման գործընթացի տակավին նախօրեին հանրապետության ազգաբնակչության գերակշռող մասի մեկնարկային հնարավորությունները հավասարվեցին 17 դոլարի: Ռուբլու միասնական գույքի փուլգտնումը և սեփական դրամական միավոր մտնելու արդյունքում 1993 թ. դեկտեմբերին 1992 թ. դեկտեմբերին

16 Անդ, 21 դեկտեմբերի 2001:

17 Անդ, 29 դեկտեմբերի 1999:

18 «Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան. 1999. մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում», Երևան, 1999, էջ 33:

19 «Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան. 2001. Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում», Երևան, 2001, էջ 105:

20 «Արտագաղթը Հայաստանից», խմբ.՝ Ն. Խառապյան, Երևան, 2003, էջ 21:

21 Տե՛ս Ա. Թադևոսյան, Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման ու ամրապնդման տեսանկյունից, Երևան, 2003, էջ 14. Ա. Թադևոսյան, Աղքատության համակարգային հիմքերը և հաղթահարման ուղիները Հայաստանում, խմբ.՝ Ա. Շահումյան, Երևան, 2001, էջ 12:

22 «Հայաստանի Հանրապետություն», 20 նոյեմբերի 1993:

23 Անդ, 2 դեկտեմբերի 1993:

համեմատությամբ հանրապետությունում սպառողական գները փաստորեն աճեցին 110 անգամ: Մինչդեռ նույն ժամանակահատվածում պերական հատվածի աշխատողների միջին ամսական աշխատավարձը նվազեց մոտ 65 %-ով²⁴: Հանրապետությունում աղքատությունը գրեթե անփոփոխ էր 1996-1999 թվականներին: Այն տարածվում էր միջինը 54-55 տոկոսների սահմանում²⁵: Հայաստանում աղքատության հիմնական առանձնահատկությունն այն էր, որ դա ձեռավորվել էր ոչ թե նախկինում չունեող շերտի առկայության, այլ ինստիտուցիոնալ բնույթի վերափոխումների արդյունքում բնակչությանը ունեզրկելու հետևանքով: Եւ միանգամայն բնական էր, որ նորանկախ պետությունն ու ողջ հասարակությունը պետք է ձեռնարկեին որոշակի քայլեր իրավիճակը ինչ-որ չափով մեղմելու նպատակով: Այդ նպատակին էր ծառայում տրակավին 1992 թ. մարտին ՄՀ նախագահի հրամանագրով հիմնադրված «Հայաստան» համահայկական հիմնադրամը²⁶, որի կազմավորման եւ գործունեության կարգը սահմանող կանոնադրությունը ՄՀ կառավարության կողմից վավերացվեց 1992 թ. հուլիսի 30-ի թիվ 428 որոշմամբ²⁷:

«Հայաստան» հիմնադրամը ուսումնասիրվող ժամանակահատվածում զբաղված էր նաեւ Հայաստանին մարդասիրական օգնության կազմակերպման գործով: Հենց ձեռավորման տարվանից հիմնադրամը կարիքավորներին օժանդակելու բազմաթիվ ծրագրեր էր իրականացնում աղերի գոտում, հատկապես ձմռանը հանրապետության ողջ տարածքում, Արցախում եւ այլն: Այսպես, «Զմեռ-93» ծրագրով էներգետիկ ճգնաժամում հայտնված Հայաստանի բնակչությանը օգնության կարգով ձեռք էր բերվել եւ հիմնադրամի անմիջական վերահսկողության ներքո Երեւանում եւ հանրապետության այլ բնակավայրերում տեղադրվել շուրջ 260 հազար դոլարի անհրաժեշտ էլեկտրական սարքավորում: Նույն տարում մարդասիրական օգնության կարգով հիմնադրամը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը տրամադրել է ընդհանուր հաշվով 200 մլն ռուբլու գյուղատնտեսական տեխնիկայի համար անհրաժեշտ վառելիքային, կարտոֆիլի եւ ցորենի սերմացու եւ այլն: Հանրապետության հատկապես խոցելի ընկերային խմբի՝ բռնագաղթածների համար կառուցվել են 200 մլն ընդհանուր արժողությամբ 4 շենքեր եւ այլն²⁸: 1993-1994 թթ. ձմռանը հիմնադրամը ստանձնել էր Երեւանի ջեռուցման համար 80 հազար տոննա մագուրի ձեռքբերման եւ Հայաստան ներկրելու, մայրաքաղաքի էներգետիկ համակարգի վերանորոգման եւ մոտ 130 կենսական նշանակության օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերը, որոնք կազմում էին 21 մլն դոլար²⁹: 1992-ից մինչեւ 1998 թ. ներառյալ «Հա-

24 «Հայաստանի մարդկային զարգացման ազգային զեկույց. 1995», Երեւան, 1995, էջ 18:

25 «Մարդկային զարգացման ազգային զեկույց. Հայաստան. 2001. Անկախության եւ անցումային 10 տարիները Հայաստանում», Երեւան, 2001, էջ 94:

26 «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», հ. 5 (1009), 15 մարտի 1992, էջ 60-62:

27 Հայաստանի ազգային արխիվ (ՄԱԱ), ֆ. 113, ց. 167, գ. 415, թ. 1-3:

28 «Հայաստանի Հանրապետություն», 14 ապրիլի 1993:

29 Անդ, 26 հոկտեմբերի 1993:

յաստան» համահայկական հիմնադրամը աղերի գոյում իր միջոցներով իրականացրել էր 7,5 մլն դոլարի վերականգնման և վերակառուցման ծրագրեր³⁰: 1996-1997 թթ. «Նայաստան» համահայկական հիմնադրամի շրջանակներում ձևավորվեցին «Երվանդ Գաբուզյան» և «Նժիվսիմե Փիրզադյան» անձեռնմխելի ֆոնդերը, որոնք օգնություն էին փրամադրում ԵՊՀ և բժշկական համալսարանի կարիքավոր ուսանողներին³¹: Սկսած 1995-ից՝ հիմնադրամի գործադիր վարչությունը իրականացնում էր 12 ժամանոց հեռուստամաթաթոններ, որոնցից սրացված ողջ հասույթը նպաստների ձևով փրամադրվում էր Արցախյան պարերազմում գոհված և հաշմանդամ դարձած ազապամարիկների երեխաներին: Մինչև 1998 թ. հանգանակված 1 մլն 430 հազար ԱՄՆ դոլարը որպես նպաստ վճարվել էր թվով 8300 երեխաների³²: Ներկայացված փաստերը վկայում են ամենապարբեր որոյրներում հիմնադրամի ծավալած մեծամասշտաբ գործունեությունը ազգաբնակչության կենսամակարդակը ինչ-որ չափով բարձրացնելու նպատակով: Մինչև 1999 թ. իր գործունեության 7 տարվա ընթացքում հիմնադրամն իրականացրել էր 60 մլն ԱՄՆ դոլարի ծրագրեր՝ աղերի գոյում, Լեռնային Ղարաբաղի Նանրապետությունում, Երեանում, Նայաստանի տարբեր մարզերում: Դպրոցներ ու բնակելի շենքեր են կառուցվել աղերի գոյում և Արցախում: Շահագործման են հանձնվել բարձրակարգ ավտոճանապարհներ ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես և Նայաստանում: Էներգետիկ ճգնաժամի դժնդակ տարիներին իրականացվել են «Ձմեռ-93», «Ձմեռ-94» համակարգված ծրագրերը: Շուրջ 2 մլն դոլարի նպաստներ են տրվել ազապամարիկների ընտանիքներին և այլն³³:

Նայաստանում ստեղծված ծանր ընկերային կացությունը շարկելու, համատարած բնույթ կրող աղբարությունը ինչ-որ չափով նվազեցնելու գործում Լեռնային դերակարություն ունեցավ արտասահմանյան երկրներից ու միջազգային ամենապարբեր կազմակերպությունների ջանքերով Նայաստան առաքվող մարդասիրական օգնությունը: Այսպես, 1994-1996 թթ. Նայաստան էր առաքվել շուրջ 335 մլն դոլարի մարդասիրական օգնություն³⁴: Նայաստան էին ներկրվում սննդամթերք, դեղորայք ու բժշկական սարքավորումներ, մագոթ, կերտսին և այլն³⁵: Անկախացումից անմիջապես հետո, 1991 թ. դեկտեմբերին ՂՀ նախագահի հրամանագրով հասարակական ու տարբեր կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովը իրականացնում էր Նայաստանի Նանրապետություն մուտք գործող մարդասիրական օգնության հաշվառումը, բաշխման համակարգումը և իրականացնում էր այդ աշխատանքների նկատմամբ վերահսկողություն³⁶, իսկ 1993 թ. ամռանից մարդասիրական օգնության

30 «Նայաստանի Նանրապետություն», 5 դեկտեմբերի 1998:

31 Անդ, 7 հուլիսի 1999:

32 Անդ, 8 հունվարի 1998:

33 Անդ, 11 փետրվարի 1999:

34 «Նայաստանի վիճակագրական տարեգիրք. 1995, 1996», Երեան, 1998, էջ 181:

35 «Նայաստանի Նանրապետություն», 15 դեկտեմբերի 1994:

36 Անդ, 4 ապրիլի 1993:

հետ կապված այդ գործառնությունը իրականացնում էր նախարարների խորհրդի որոշմամբ ստեղծված ՆՆ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված էին բարեգործական օգնության առնչվող ՆՆ նախարարությունների, պետական վարչությունների և գերատեսչությունների ղեկավարներ, պետական իշխանության մարմինների, կառավարական ու ոչ կառավարական, հասարակական, կրոնական ու մարդասիրական կազմակերպությունների ղեկավարներ³⁷:

Հանրապետությունում մարդասիրական օգնության հետ կապված բոլոր հարցերի ղեկավարությունը իրականացնող այդ պետական կառույցի պարբերաբար գումարվող նիստերում քննարկվում և որոշումներ էին ընդունվում հիմնախնդրի հետ առնչվող ամենաբազմաբնույթ հարցերի կապակցությամբ: Այսպես, ՆՆ կառավարության մարդասիրական օգնության հանձնաժողովի 1993 թ. օգոստոսի 16-ին կայացած առաջին նիստում կառավարության մշակած «Ձմեռ-93» ծրագրի քննարկման արդյունքում ընդունված որոշման մեջ որպես հանձնաժողովի կարևորագույն խնդիր էր արձանագրվել այդ ծրագրի հապկապես ընկերային հաղթածին կառույցի գործուն մասնակցությունը: Նույն նիստում հաշվեպնդություններ էին լսվել 1993 թ. կառավարության հասցեով հանրապետություն մուտք գործած մարդասիրական օգնության ամերիկյան «Զերը» կազմակերպության միջոցով 4 հազար պոնտա մանկական սննդի սրահման և բաշխման, Երևանի մայրիկի կողմից «Ազնավորը Հայաստանին» ֆոնդի միջոցով սրահման ընդունված արկղերի բաշխման մասին³⁸ և այլն: Նույն ամսվա վերջում՝ օգոստոսի 30-ին Կրեմլի ունեցած նիստում ի թիվս այլ հարցերի քննարկվել էր Կապան քաղաքի ռմբակոծությունից պոռժած բնակչությանը օգնություն ցույց տալու հարցը և նշվել, որ ռմբակոծության հաջորդ օրն իսկ, հանձնաժողովի հանձնարարականով, պոռժած քաղաք էր ուղարկվել 500 կգ բուսական յուղ, 2016 փաթեթ կաթի փոշի և այլ կարգի սննդամթերք: Բացի այդ «Ազնավորը Հայաստանին» ֆոնդի Երևանի գրասենյակը իր նախաձեռնությամբ Կապան էր հասցրել 500 ընդունված արկղ սնունդ: Բարեգործական հանձնաժողովի որոշմամբ մարդասիրական օգնություն էր հաղկացվել հանրապետության քաղաքների լուսավորության համակարգերի աշխատողներին և այլն: Հանձնաժողովի նիստում ելույթ ունեցած ՆՆ փոխնախագահ Գ. Հարությունյանը կարևորելով հանրապետություն մուտք գործող մարդասիրական օգնության հաշվառման, բաշխման և վերահսկողության կառավարական հանձնաժողովի ստեղծումը, միաժամանակ շեշտել էր բաշխման գործում ընկերային արդարության պահպանման անհրաժեշտությունը: Հանձնաժողովի նիստում ներկայացվել էր նաև սփյուռքահայ պարբեր կազմակերպությունների «Ձմեռ 93-94» ծրագրի մասնակցության հարցը և մասնավորապես նշվել, որ «Հայաստան» համագաղթյին հիմնադրամին փոխանցված միջոցների մի մասը կհաղկացվի «Ձմեռ» ծրագրի իրականացմանը³⁹:

37 Անդ, 17 օգոստոսի 1993:

38 «Հայաստանի Հանրապետություն», 17 օգոստոսի 1993:

39 Անդ, 31 օգոստոսի 1993:

Նույն 1993 թ. սեպտեմբերի 24-ին կայացած ՆՀ կառավարության մարդասիրական օգնության հերթական նիստում քննարկվել էին արտասահմանյան երկրներից, զանազան բարեգործական, կրոնական և հասարակական կազմակերպություններից ստացված մարդասիրական օգնության բաշխման հարցեր, լսվել էին հանրապետությունում այդ շրջանում գործած բարեգործական, կրոնական և հասարակական կազմակերպությունների գրասենյակների հաշվեպատկերները, իրենց կապարած աշխատանքների մասին: Մասնավորապես նշվել էր, որ ԱՄՆ կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները Հայ Առաքելական Եկեղեցու Արևելյան թեմի հայ օգնության ֆոնդի միջոցով «Ձմեռային փրկություն» ծրագրով որպես մարդասիրական օգնություն Հայաստան էին առաքել շուրջ 50 տոննա լոբի, 28 տոննա բրինձ և այլն, 30 հազարից ավելի հոլի կանանց հարկացվելու էր մեկական լիպր Իփալիայից ներկրված ձեթ և այլն: Իսկ «Ազնավորը Հայաստանին» ֆոնդի Երևանյան գրասենյակի րնօրենը րեղեկացրել էր, որ երևանաբնակ կարիքավորներին արդեն բաժանվել էր սննդամթերքով լցված 36 հազար 20 կիլոգրամանոց արկղ⁴⁰ և այլն:

Արտասահմանից առաքվող մարդասիրական օգնության գործընթացը դեկավորող գլխավոր պերական մարմնի 1994 թ. նոյեմբերի սկզբի նստում ի թիվս այլ հարցերի քննության էր առնվել և հավանության արժանացել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակաության ծրագիրը, ըստ որի հանրապետության 118 հազար կարիքավորների, որպես մարդասիրական օգնություն, նախատեսվում էր րրամադրել 2750 տոննա սնունդ⁴¹ և այլն: Նման ծավալուն անդրադարձը կառավարությանն առնթր հանձնաժողովի գործունեությանը կարող է նույնիսկ ավելորդ թվալ, սակայն քիչ ավելի հանգամանալից կերպով անդրադառնալով պերական կառույցի նիստերին՝ ցանկացել ենք ոչ միայն որքան հնարավոր է ամբողջականորեն լուսաբանել հանձնաժողովի աշխատանքների բնույթը, այլև ներկայացնելով արրերկրից մարդասիրական օգնության դրսևորումները՝ մեկ անգամ ևս շեշտել ինքնիշխանություն կերպող նորանկախ հանրապետությանը ամենադժվարին պահերին օգնության ձևք մեկնած երկրներն ու կազմակերպությունները և միաժամանակ որոշակի փաստերով արձանագրել այն ծանրագույն ընկերային վիճակը, որում հայրնվել էր Հայաստանի բնակչությունը: Անհրաժեշտ է նշել, որ արրերկրից նորանկախ Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվող մարդասիրական օգնությունը ոչ միայն դրսևորվում էր սննդամթերք կամ էներգալիքներ առաքելով, այլև հանրապետության րարբեր ոլորտներում իրականացվող ինստիտուցիոնալ բնույթի վերափոխումներին դրամական հարկացումներ կապարելով: Այսպես, ԱՄՆ-ի կողմից 1998 թ. որպես մարդասիրական օգնություն Հայաստանին րրամադրված 135 մլն դոլարից ընդամենը շուրջ 48 մլն դոլարն էր հարկացվել բարեգործական նպարակներով հանրապետության ազգաբնակչությանը պարեն, վառելիք, լայն սպառման ապրանքներ րրամադրելու համար: Մնացյալ ողջ գումարը, որպես անհապույց մարդասիրական օգնություն, օգարգործվել էր ՆՀ կա-

40 Անդ, 25 սեպտեմբերի 1994:

41 Անդ, 4 նոյեմբերի 1994:

ռավարության անմիջական ղեկավարությամբ հանրապետությունում իրականացվող այնպիսի խնդիրների լուծման համար, ինչպիսիք էին դարական, ֆինանսական համակարգերի բարեփոխումները, մասնավոր բիզնեսի, գիտության ու կրթության բնագավառների զարգացմանը, գյուղատնտեսական մարքեթինգի օգնության, քաղաքների մասնագետների վերապարտաստմանը, նպաստել Հայաստանում շուկայական համապարփակ բարեփոխումների իրականացմանը⁴² և այլն: Ցուցաբերվող մարդասիրական օգնությունը չդադարեց նաև հետագա տարիներին: Այսպես, 2000 թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Հայաստան էին ներկրվել ավելի քան 59 մլն դոլարի ամենափոքր քանակի բեռներ: Հարկ է նշել մի շարք կարևոր հանգամանք, որ այդ շրջանում արդեն էապես փոխվել էր մարդասիրական բեռների տեսականին: Արդեն ներկրվում էին հիմնականում քիմիական արդյունաբերության ճյուղերի արտադրանք, մեքենաներ ու սարքավորումներ, մանածագործական իրեր և այլն⁴³: Մարդասիրական օգնության կազմակերպման մեջ մեծ ներդրում ունեցավ նաև հայկական սփյուռքը: Այսպես, 1990-1999 թթ. սփյուռքի կազմակերպությունների՝ Հայաստանին տրված մարդասիրական օգնությունը կազմել է շուրջ 600 մլն դոլար⁴⁴: Հանրապետությունն առաքվող օգնության փութինման հարցերը կարգավորող ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովը 2000-2001 թթ. համար Հայաստանին օգնություն փոխադրող մի քանի երկրների հետ մշակել և իրականացնում էր խոշորամասշտաբ բարեգործական ծրագրեր⁴⁵: Միայն ԱՄՆ-ը, որը նորանկախ Հայաստանին տարբեր տարիներին մարդասիրական օգնություն ցուցաբերած երկրների շարքում բարեգործության ծավալներով մշտապես եղել է առաջինը, 2001 թ. փոխադրել է 89 մլն դոլարի փութեսական օգնություն⁴⁶: Որպեսզի պարզ դառնա մարդասիրական օգնության խաղացած բացառիկ դերը նորանկախ Հայաստանին հատկապես առաջին տարիներին, բերենք ընդամենը մեկ փաստ: 1994 թ. հանրապետության բացառապես ներքին հնարավորությունների հաշվին բնակչության մեկ շնչին ընկնող ամսեկան եկամուտը կազմել է մոտ 10 դոլար, մինչդեռ գլխավորապես արտերկրի մարդասիրական օգնության արդյունքում եկամտի իրական չափը ավելացել է ևս 8 դոլարով՝ դառնալով 18 դոլար⁴⁷:

Ազգաբնակչության ընկերային վիճակի թերեւոցմանը էապես նպաստում էր նաև փրանսֆերտային եղանակով ֆինանսների մուտքը հանրապետություն: Այսպես, ըստ որոշ աղբյուրների՝ միայն 1997 թ. արտերկրից մասնավոր դրամական փոխանցումները կազմել էին շուրջ 250 մլն դոլար, որը հավասար էր հանրապետության ՀՆԱ-ի մոտ

42 «Հայաստանի Հանրապետություն», 19 օգոստոսի, 1998:

43 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-նոյեմբերին», Երևան, 2001, էջ 67:

44 «Հայաստանի Հանրապետություն», 17 դեկտեմբերի 1999:

45 Անդ, 29 սեպտեմբերի 2000:

46 Անդ, 13 մայիսի 2001:

47 «Հայաստան: Մարդկային զարգացման զեկույց. 1995», Երևան, 1995, էջ 22:

15%-ին⁴⁸։ Ի թիվս այլ հանգամանքների նաև արտերկրի բարեգործության արդյունք էր, որ աղքատության ցուցանիշը հանրապետությունում որոշակիորեն սկսեց նվազել և արդեն 2001 թ. ՀՀ-ում սոցիալական նվազագույն նիշը չհաղթահարողների թիվը կազմում էր բնակչության 50,9%-ը⁴⁹։ Սակայն, այնուամենայնիվ, Հայաստանում մեծամասշտաբ աղքատությունը ուղեկցվում էր ընկերային շերտավորման ծայրահեղ բեկեռացմամբ։ 1990-ական թթ. կեսերից մինչև խնդրո առարկա ժամանակահատվածի վերջը Հայաստանում հարուստների 10%-ի կողմից ստացվող եկամուտների չափը շուրջ 48 անգամ գերազանցում էր աղքատության ամենացածր սանդղակին կանգնած 10%-ի եկամուտները⁵⁰։ Մինչդեռ մասնագետների հավաստմամբ սոցիալական անվտանգության առումով բնակչության ամենահարուստ և ամենաաղքատ խմբերի եկամուտների տարբերությունը պետք է կազմի ոչ ավելի քան 8 անգամ⁵¹։ Հակառակ պարագայում հասարակության մեջ կարող են դրսևորվել հանրության ամբողջականությունը լրջորեն վտանգող սոցիալ-քաղաքական բնույթի այնպիսի անցանկալի երևույթներ, ինչպես օրինակ հասարակական կյանքում լարվածության սրումը, իշխանությունների նկատմամբ հանրության վստահության խաթարումը և այլն։ Եկամուտների բեկեռացումն արտացոլող, այդ այսպես կոչված, դեցիլային գործակիցը Արևելյան Եւրոպայի երկրներում քննարկվող ժամանակահատվածում չէր անցնում 5,6-ից, Արևմտյան Եւրոպայում այն տարանվում էր 2-ից մինչև 5,7, իսկ ԱՄՆ-ում կազմում էր 5,3⁵²։

Հանրապետությունում խորացող սոցիալական բեկեռացման և բնդհանրապես աղքատության հաղթահարման նպատակով ՀՀ-ի իշխանությունները փորձեր էին ձեռնարկում իրականացնելու պետական քաղաքականություն։ Հանրապետությունում հասցեական սոցիալական աջակցության պետության կողմից վարվող քաղաքականությունը սկսվել էր 1992 թվականից։ Այն դրսևորվում էր գերազանցապես բնակչության առավել անապահով խմբերին տրվող տարբեր քիչի նպաստների, ինչպես նաև դրամական փոխաբուցումների ձևով։ Նպաստների համակարգի ձևավորման գործում վճռորոշ նշանակություն ունեցավ ՀՀ կառավարության կողմից 1994-ից «Փարոս» ծրագրի իրականացումը։ Այն փաստորեն իր մշակված փնտրագրական-տեղեկատվական հզոր բազայով ընկած էր բնակչությանը պետության կողմից ստարարելու սոցիալական ամենաբազմաբնույթ միջոցառումների հիմքում։ 1998 թ. արդեն «Փարոս» ծրագրում հաշվառված էին հանրապետության ավելի քան 735 հազար ընտանիքներ։ Ելնելով յուրաքանչյուր ընտանիքի վերաբերյալ տեղեկատվական բազայի տվյալ-

48 «Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, 1998, Պետության դերը», Երևան 1998, էջ 59։

49 «Կայուն զարգացման համաշխարհային զարգացման ծրագրի, ՅՈՒՆԵՍԿՈՒՄ, 2001, «Հայաստանի Հանրապետություն, Ազգային զննարարման զեկույց», Երևան, 2002, էջ 56։

50 Տե՛ս Ա. Մարկոսյան, Հայաստանը 21-րդ դարի մարտահրավերների առջև, Երևան, 2004, էջ 21։

51 Տե՛ս Ա. Մարկոսյան, Ն. Գեղամյան, Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման իմունահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2006, էջ 276։

52 Ա. Մարկոսյան, Հայաստանը 21-րդ դարի մարտահրավերների առջև, Երևան, 2004, էջ 21։

ներից՝ հաշվարկվում էր ընդհանրիկ կարիքավորության աստիճանը⁵³: Փաստորեն «Փարոսը» ոչ թե կազմակերպություն, այլ ընդամենը ծրագիր էր, որի շրջանակներում ստեղծվել էր ընդհանրիկ կարիքավորության աստիճանի գնահատման մի յուրօրինակ մաթեմատիկական համակարգ: Այն առաջին անգամ փորձարկվեց 1995 թ. մարտին, երբ մարդասիրական օգնության իրականացման նպատակով 20-ական լիարժեք բաժանվեց Երևանի 50 հազար ընդհանրիկների, որոնք նախորդ ժամանակահատվածում «Ձմեռ 94-95» ծրագրով օգնության բաշխման ոլորտում տեղ գրած թերացումների և հատկապես յուրացումների պարտադրով զրկված էին եղել դրանից: «Ձմեռ 95-96» ծրագրով արդեն նավթ բաշխվեց Երևանի, Գյումրիի, Վանաձորի և աղերի գոտի ու սահմանամերձ շրջանների 200 հազար ընդհանրիկների⁵⁴: Ըստ էության «Փարոս» ծրագրի ավյալները հիմք էին դառնում հանրապետությունում մարդասիրական գործունեություն ծավալած ամենաարագ բնույթի կազմակերպությունների համար՝ նպաստների փոխանցման բարեգործական առաքելության իրականացման գործում: Զինարկվող ժամանակահատվածում «Փարոս» ծրագրի շրջանակներում ի թիվս Նայասարանի ու արտերկրի ամենաարագ ելքերից և հասարակական կազմակերպությունների իր ամենակարգ գործունեությունն էր ծավալել Նայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի հայ օգնության ֆոնդը՝ ՆՕՖ-ը⁵⁵, որը վայելելով ԱՄՆ կառավարության լիակատար վստահությունը դարձել էր Միացյալ Նահանգների կողմից, Նայասարանին մարդասիրական օգնության միակ մատակարարը⁵⁶: «Փարոսի» ներդրումից հետո արդեն 1996 թ. վերջերին Նայասարանում բարեհաջող կերպով իրականացվել էր մարդասիրական օգնության 41 ծրագիր, որոնք միասին վերցրած ընդգրկել էին ավելի քան 1 մլն 800 հազար ընդհանրիկ⁵⁷: «Փարոս» ծրագրի առկայությունը Նայասարանում մեծապես նպաստում էր հանրապետությանը մարդասիրական օգնություն փոխանցող երկրների վստահության աճին, որն ավելի էր մեծացնում հասցեական աջակցության չափերը: Այսպես բացառապես «Փարոսի» առկայությամբ էր պայմանավորված «Ձմեռ 1997-1998» ծրագրի շրջանակներում կարիքավոր ճանաչված 15 հազար ընդհանրիկների ԱՄՆ կառավարության կողմից, որպես մարդասիրական օգնություն, էլեկտրաէներգիայի անվճար կտրոնների փոխանցումը⁵⁸ և այլն: 1992 թ. սկզբից հանրապետությունում գործող ամենաբազմաբնույթ նպաստների համակարգի փոխարեն 1999 թ. հունվարի 1-ից, ՆՕ կառավարության որոշմամբ ներդրվեց ընդհանրիկների կարիքավորության աստիճանի հաշվառման վրա հիմնված հասցեական սոցիալական աջակցության միասնական ընդհանրական նպաստների հա-

53 «Նայասարանի Նախապետություն», 31 հուլիսի 1998:

54 Անդ, 9 փետրվարի 1996:

55 Անդ, 15 օգոստոսի, 18 սեպտեմբերի 1998թ.:

56 Անդ:

57 Անդ, 23 նոյեմբերի 1996:

58 Անդ, 13 հունվարի 1998:

մակարգը, որը եւս, ինչպես արդեն հասկանալի է, ամբողջովին հիմնված էր «Փարոս» համակարգի վիճակագրական-տեղեկատվական բազայի վրա⁵⁹:

Աղքատության վերացման ողորդյալը հանրապետությունում ծավալված մարդասիրական գործընթացներում «Փարոս» ծրագրի բացառիկ դերակատարության մասին է վկայում նաև այն փաստը, որ մինչև 2000 թ. օգոստոսին ՆՀ ազգաբնակչությանը 300 մլն դոլարի օգնություն էր բաժանվել⁶⁰: Խնդրո առարկա ժամանակահատվածում Նայաստանում աղքատության հաղթահարման ողորդյալը ձեռնարկված քայլերի համակարգում որակապես նոր երևույթ էր «Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրի» իրականացումը, որի մշակման և միջանկյալ ԱՆՌԾ-ի կազմման աշխատանքները իրականացվեցին 2000-2001 թթ. ընթացքում: Ծրագրի մշակման աշխատանքները անմիջականորեն իրականացնող համակարգման խորհուրդն ու աշխատանքային խումբը հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ղեկավարությամբ ձեռնամուխ էին եղել ամբողջական «Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրի» պատրաստմանը⁶¹: «Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրի» կարևորագույն առանձնահատկությունն այն էր, որ փորձում էր աղքատության հիմնահարցին փափաքով համակարգված լուծում:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ չնայած հանրապետությանը ցուցաբերվող օգնությանն ու երկրի ներքում աղքատության նվազեցման ողորդյալը ձեռնարկված միջոցառումներին՝ տրակավին 2000 թ. փվյալներով Նայաստանը դասվում էր աշխարհի ամենաաղքատ երկրների շարքում⁶²: Նման դրությունից դուրս գալու նպատակով հանրապետության իշխանությունների գործելաճճի անկապելի մասն էր դարձել արտերկրից խոշորամասշտաբ վարկեր վերցնելու քաղաքականությունը, որն իր հերթին ավելի էր մեծացնում հանրապետության արտաքին պարտքը: Այսպես, 1997 թ. փվյալներով միջազգային ֆինանսական կազմակերպություններից, ինչպես օրինակ, ՆԱԽ-ից, ՄՎՀ-ից, Երոբանիից, այսպես կոչված դոնոր երկրներից, որպիսիք էին քննարկվող ժամանակահատվածում Գերմանիան, Ֆրանսիան, Նիդերլանդները, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը և այլն, Նայաստանի՝ սրացված վարկերից գոյացած արտաքին պարտքը կազմում էր ավելի քան 600 մլն դոլար⁶³: 2000 թ. հանրապետության պետական պարտքը արդեն հասել էր շուրջ 860 մլն դոլարի⁶⁴, իսկ 2001-ին՝ շուրջ 906 մլն դոլարի⁶⁵: Նայաստանի Նանրապետությանը փրամադրված

59 «Նայաստանի Նանրապետության սոցիալական պարկերը և աղքատությունը. Վիճակագրական վերլուծական զեկույց. ըստ 2002 թ. տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների», Երևան, 2003, էջ 68:

60 «Նայաստանի Նանրապետություն», 18 օգոստոսի 2000:

61 «Կայուն զարգացման համաշխարհային զագաթնաժողով. Յոհանեսբուրգ», 2002. «Նայաստանի Նանրապետություն. Ազգային զնահարման զեկույց», Երևան, 2002, էջ 57:

62 Տեն Ա. Դավոյան, Ա. Մարկոսյան, Ն. Մարգարյան, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում», Երևան, 2003, էջ 170:

63 «Նայաստանի Նանրապետություն», 20 օգոստոսի 1997:

64 «Նայաստանի վիճակագրական տարեգիրք. 2001», Երևան, 2001, էջ 379:

65 «Նայաստանի վիճակագրական տարեգիրք. 2002», Երևան, 2002, էջ 402:

արտասահմանյան վարկերի հիմնական զանգվածն ուղղվում էր բյուջեի խորնիկական դարձած ճեղքվածքների փակմանը, ազգային արժույթի ամրապնդմանը, արտադրական ենթակառուցվածքների զարգացմանը և այլն, մի խոսքով, խորքային առումով մարդկանց կենսականարդական ինչ-որ չափով բարելավելուն:

Արմավրական փոփոխական վերափոխումներ իրականացնող նորանկախ երկրի համար մի անասելի ծանրության բեռ էին դարձել արագ փոփոխվող աճող արտաքին պարզի սպասարկման համար պարբերաբար կատարվող վճարումները, որոնք հաճախ կազմում էին բյուջեի եկամտային մասի մինչև 20%-ը: Եւ այդ պարագայում առավել քան անմարդկային էր իշխանությունների կողմից դրանց աննպատակ վարկումն ու վարչական կոռուպցիայի արդյունքում ըստ էության յուրաքանչյուր հայաստանցու ուսերին ծանրացած այդ վարկերից կատարվող յուրացումները:

Այսպես, 1998 թ. իշխանափոխությունից անմիջապես հետո խորհրդարանում ստեղծված օրարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի⁶⁶ կողմից նույն թվականին անցկացված սրտգոյմների արդյունքում պարզվել էր, որ զարգացման և վերակառուցման բանկի կողմից Նրագդանի ԴՇԵՆ 5-րդ բլոկի կառուցման նպատակով ՆՆ կառավարությանը տրամադրված 57,4 մլն դոլար վարկից⁶⁷ աննպատակ վարկվել էր ուղիղ 55 մլն դոլար⁶⁸ և, ուրեմն, պետությանը հասցվել էր հենց այդքան վնաս: 1995-1998 թթ. ԱՄՆ-ի տրամադրված 45 մլն դոլար ապրանքային վարկերից⁶⁹ վարկվել էր շուրջ 1,7 մլն դոլարը և յուրացվել շուրջ 7 մլն 400 հազար դոլար⁷⁰: Նայաստանին 1996 թ. տրամադրված թուրքմենական 34 մլն դոլարի հասնող վարկի⁷¹ 12 մլն դոլարը վարկվել էր, իսկ 13 մլն դոլարը հանրապետության իշխանական աստիճանակարգության փոքրեր մակարդակներում կոռուպցիայի արդյունքում անհետացել էր⁷²: 1996-1997 թթ. Ռուսաստանի Դաշնության՝ Նայաստանի կառավարությանը տրամադրված 73,7 մլն դոլար ապրանքային վարկերից⁷³ վարկվել էր շուրջ 3 մլն-ը և պարզապես յուրացվել շուրջ 40 մլն դոլար, և դրանով պետությանը հասցվել մոտ 43 մլն դոլար «մաքուր» վնաս⁷⁴: Այսպիսով, 1992-ից 1998 թթ. «Միջազգային զարգացման գործակալության», «Զարգացման և վերակառուցման միջազգային բանկի», «Զարգացման և

66 «Նայաստանի Ներապետություն», 3 սեպտեմբերի 1998:

67 «Նայաստանի Ներապետության պաշտոնական փոփոխություն», թ. 24 (57), 1 հոկտեմբերի 1998, էջ 163:

68 «Մարդկային զարգացման զեկույց. Նայաստան. 1999. Մարդկային զարգացման հինգ փոքրիկ Նայաստանում», Երևան, 1999, էջ 64:

69 «Նայաստանի Ներապետության պաշտոնական փոփոխություն», թ. 24 (57), 1 հոկտեմբերի 1998, էջ 164:

70 «Մարդկային զարգացման զեկույց. Նայաստան. 1999. Մարդկային զարգացման հինգ փոքրիկ Նայաստանում», Երևան, 1999, էջ 64:

71 «Նայաստանի Ներապետության պաշտոնական փոփոխություն», թ. 24 (57), 1 հոկտեմբերի 1998, էջ 164:

72 «Մարդկային զարգացման զեկույց. Նայաստան. 1999. Մարդկային զարգացման հինգ փոքրիկ Նայաստանում», Երևան, 1999, էջ 64:

73 «Նայաստանի Ներապետության պաշտոնական փոփոխություն», թ. 24 (57), 1 հոկտեմբերի 1998, էջ 164:

74 «Մարդկային զարգացման զեկույց. Նայաստան. 1999. Մարդկային զարգացման հինգ փոքրիկ Նայաստանում», Երևան, 1999, էջ 64:

վերակառուցման ելքայական բանկի», «Գյուղատնտեսության զարգացման միջազգային բանկի», «Եվրոբանկի», «Միջազգային արժույթային հիմնադրամի», Ճապոնիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության, Թուրքմենստանի, Ֆրանսիայի և Չինաստանի կողմից ՆՆ կառավարությանն ու հանրապետության կենտրոնական բանկին փրամադրված առավել ծավալուն 49 վարկերի⁷⁵ թվում խոշորամասշտաբ 14 վարկերի ընդհանուր հաշվով 382,35 մլն դոլար կազմող գումարից հանրապետությունում վարկվել էր 90 մլն դոլարը և յուրացվել 62,51 մլն դոլարը ու այդպիսով պետությանը, ասել է թե առանց այդ էլ աղքատության մեջ մի կերպ գոյատևող ժողովրդին հասցվել էր մոտ 153 մլն դոլարի վնաս⁷⁶:

Քաղաքական, փրկեսական բնույթի բացասական հետևանքներից բացի, կաշառակերությունը լուրջ հիմնախնդիրներ էր ծնում նաև հասարակության ընկերային կյանքում: Կոռուպցիան, նպաստելով հասարակական բարիքի անարդյունավետ վերաբաշխմանը, ողջ պետական հարվածի անարդյունավետությանը, դրանով իսկ ավելի էր վարթաբացնում անապահով խավի սոցիալ-փրկեսական կացությունը:

Ամփոփելով անկախացումից հետո ինքնիշխանության հաստատման ուղով ընթացող Նայաստանի Նանրապետությունում սրելոված սոցիալական կացության լուսաբանումը, հիմնվելով արդեն բերված բազմաթիվ փաստերի վրա՝ կարող ենք անվարան արձանագրել, որ քննարկվող ժամանակահատվածում համընդհանուր փրկեսական անկման հետևանքով, աննախադեպ խոշորամասշտաբ անկում գրանցվեց նաև հանրապետության սոցիալական ոլորտում: Նայաստանում «գրանցում» սրացան մինչ այդ գոյություն չունեցած սոցիալական այնպիսի ցավալի երևույթներ, ինչպիսիք էին գործազրկությունն ու աղքատությունը: Չնայած իշխանությունների վարած սոցիալական քաղաքականությանը, այդ բնագավառի օրենսդրական դաշտի ձևավորմանն ուղղված իրավական փաստաթղթերի ընդունմանը, այնուամենայնիվ, այդ ոլորտներում էական առաջընթաց չարձանագրվեց: Նման կացության հիմնական պարճառը անկախացմանը անմիջականորեն հաջորդած մի քանի տարիներին հանրապետության շրջափակումն ու էներգետիկ ճգնաժամն էին, իսկ հետագայում մասնավոր ոլորտում նոր աշխատատեղերի ավելացման չափազանց դանդաղ ընթացքը: Սոցիալիստական փրկեսության սեփականաշնորհումը հանրապետությունում ձևավորեց կառուցվածքային աղքատություն, որը դրսևորվեց երկրի ազգաբնակչության մոտ 85%-ի գրեթե միանգամյա ունեզրկման մեջ: Մասնավորեցման արդյունքում Նայաստանի բնակչության 1-2% վերածվեց հարուստների, 12-15% կազմեցին համեմատաբար հարուստները⁷⁷:

Փաստորեն» հանրապետությունում ձևավորված աղքատության հիմնական

75 «Նայաստանի Նանրապետության պաշտոնական տեղեկագիր», թ. 24 (57), 1 հոկտեմբերի 1998, էջ 162-166:

76 «Մարդկային զարգացման զեկույց. Նայաստան. 1999. Մարդկային զարգացման հինգ տարին Նայաստանում», Երևան, 1999, էջ 64:

77 «Աղքատությունը և ժողովրդավարությունը Նայաստանում» (գլխավոր հեղինակ Ն. Խառապյան), Երևան, 2000, էջ 17:

առանձնահատկություններից մեկն այն էր, որ սոցիալական այդ երևույթը ծագել էր ոչ թե նախկինում գոյություն ունեցած չունեոր շերտերի հիմքի վրա, այլ ինստիտուցիոնալ վերափոխումների արդյունքում հասարակ մարդկանց ունեգրելու հետևանքով:

Նորանկախ Հայաստանի իշխանությունները բավական ուշացումով ձեռնամուխ եղան սոցիալական կնճիթների լուծմանն ուղղված որոշակի քաղաքականություն իրականացնելուն: Այդ գործունեությունը հատկապես նոր թափ ստացավ 1998 թ.՝ հանրապետությունում Կոնստիտուցիոնալ իշխանափոխությունից հետո: Աստիճանաբար ձևավորվեց ու զարգացավ հասցեական սոցիալական աջակցության քաղաքականությունը: Ընդհանրապես նպաստների համակարգի ձևավորման գործում հատկապես մեծ էր ՆՀ կառավարության կողմից իրականացվող «Փարոս» ծրագրի խաղացած դերը, որի Կոնստիտուցիոնալ իշխանության կողմից ստարտելու սոցիալական բնույթի ամենաբազմապատկերման միջոցառումների հիմքում: Խնդրո առարկա ժամանակահատվածում Հայաստանում աղքատության հաղթահարման ուղղությամբ պետության ձեռնարկած քայլերի համակարգում որակապես նոր երևույթ էր «Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրի» մշակումը:

Հանրապետությունում աղքատությունը մեղմելուն էր միջված նաև արտասահմանյան երկրներից, միջազգային կառույցներից, սփյուռքից եւ այլն նորանկախ Հայաստանի Հանրապետություն առաքվող մարդասիրական օգնությունը: Այդ գործընթացի իրականացումն ապահովվում էր բազմապիսի կառույցների եւ հիմնադրամների միջոցով: 2001 թ. փվյալներով Հայաստանում գործում էին 226 ամենաարարելի հիմնադրամներ, որոնց մեծագույն մասը իրականացնում էր հենց բարեգործական գործառույթներ⁷⁸: Դրանց մեջ իր ծավալած խոշորամասշտաբ գործունեությամբ հատկապես առանձնանում էր «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Ընկերային կացության բարելավմանը միջված քայլերը անհամեմատ ավելի արդյունավետ կլինեին, եթե դրանք շար հաճախ չհանդիպեին իշխանությունների բյուրոկրատական պարսկերի եւ, որ ավելի կարեւոր է, կոռուպցիայի հետեւանքով չյուրացվեր այդ նպատակին ուղղված առանց այն էլ սուղ միջոցների զգալի մասը:

78 «Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան, 1999. Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում», Երևան, 2001, էջ 48:

ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՍՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՐՎԱՆԴ-ՕՏՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Քսաներորդ դարասկզբի նշանավոր հայ երգիծաբան Երվանդ Օսյանի գրական ժառանգության մասին հնչել են տարաբնույթ կարծիքներ, գրվել են բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է ներկայացնում երգիծաբանի գեղարվեստական արձակին առնչվող այլևայլ խնդիրներ: Աշխատություններում տարբեր դիրքավորումներ են հանդիպում նաև գրողի լեզվի և ոճի ինչ-ինչ հարցերի վերաբերյալ: Այդ անդրադարձները, սակայն, մասնավոր բնույթ ունեն և հիմնականում նպաստում են գրականագիտական խնդիրների լուծմանը: Պարզ է, որ, էականորեն տարբերվելով վերլուծության գրականագիտական միություններից, լեզվաբանական իրողությունների քննությունը միանգամայն այլ ուղղվածություն ունի:

Այս հոդվածով նպատակ ունենք հանգամանորեն ներկայացնելու Երվանդ Օսյանի երգիծանքի կարևոր արտահայտություններից մեկի՝ **խոսուն անունների** կառուցվածքային և ոճական-երգիծական գործածության առանձնահատկությունները: Դրանք ոչ թե անձնանունների բառարաններում ամրագրված և երգիծաբանի կիրառած հատուկ անուններ են, այլ գեղագիտական նպատակադրումով ստեղծված կամ ընտրված անձնանուններ, մականուններ, տեղանուններ, որոնք մասնագիտական գրականության մեջ անվանվում են **խոսուն կամ երգիծական անուններ**:

Յուրաքանչյուր լեզվում հատուկ անունները առանձնակի դեր ունեն. դրանց կարևոր գործառնությունը անձի, տեղանքի, առարկայի և այլնի անվանումն է, որով դրանք առանձնանում և ճանաչելի են դառնում իրենց ընդհանուր տեսակից: Միաժամանակ, ինչպես նշում են լեզվաբանները, «լավ» հատուկ անունը կոնկրետ իմաստից զուրկ հարակ տարբերակող-բացահայտող նշան է¹: Բացի սրանից՝ բուն հատուկ անունների ընտրության դեպքում կարևորվում են ինչպես լեզվական, այնպես էլ գեղագիտական որոշ գործոններ՝ բարեհնչունություն, կարծություն, արդիականություն և այլն, որոնք անմիջականորեն պայմանավորված են անհատական ընկալումներով: **Խոսուն կամ երգիծական անունները** զգալիորեն տարբերվում են բուն հատուկ անուններից իրենց գործառնությամբ և կիրառության ոլորտով: «Երգիծական անունները, - կարդում ենք ուսումնասիրություններից մեկում, - ոճական օժանդակ միջոցներ են, որոնք կիրառվում են երգիծական բնավորության, իրադրության, խարդավանքի նկարագրության ուժգնացման համար»²:

1 Տե՛ս A. Gardiner, The Theory of Proper Names, London, 1954, էջ 18. А. Суперанская, Общая теория имени собственного, М., 1973, էջ 37:

2 С. Влахов, С. Флорин, Непереваемое в переводе, 2-е изд., М., 1986, с. 127.